Փաստաբանի եւ Գաղթականական Խորհրդատուի Հետ Աշխատակցելը.

Ստուգացանկ

- ❒ Արդյո՞ք Օրենքի վերաբերյալ ծառայություններ մատուցող անհատը State Bar of California-ի կողմից արտոնագրված փաստաբան է։ Անհատը ձեզ պետք է տա իր State Bar-ի համարը։ Ստուգեցեք State Bar-ի հետ։ Հարցրեք եթե երբեւէ փաստաբանը ուղղապատժման է ենթարկվել։
- ❒ Գաղթականական հարցերով զբաղվող խորհրդատուները պարտավոր են ունենալ $50,000-ի երաշխիք եւ ձեզ հայթայթեն երաշխիքի ապացույց։ Պահեք երաշխիքի համարը ձեր տոմարների համար։
- ❒ Ստուգեք հանձնավկաները։ Խոսեք այլ անհատների հետ որոնք օգտվել են գաղթականական խորհրդատուի կամ փաստաբանի ծառայություններից. ստուգեք համայնքի հայտնի շրջանակների հետ։ Մի խաբվեք պատի վրա կախված գրավիչ վերնագրերից կամ փաստաթղթերից։
- ❒ Գաղթականական խորհրդատուից կամ փաստաբանից պահանջեք ստորագրված եւ ամսագրված գրավոր պայմանագիր, բայց մի ստորագրեք պայմանագիրը մինչեւ ձեզ հասկանալի լինելը։
- ❒ Խորհրդակցեք այն անհատի հետ որին վստահում եք նախքան որեւիցէ փաստաթուղթ ստորագրելը կամ վճարում անելը։ Զգուշացեք այն անհատից որը ցանկանում է որ դուք անմիջական որոշում կայացնեք։
- ❒ Վստահ եղեք որ պայմանագիրը նշում է ձեզ խոստացված բոլոր ծառայությունները եւ ձեր վճարելիք գումարի արժեքը։
- ❒ Գաղթականական խորհրդատվության պայմանագիրը պետք է գրված լինի թե Անգլերեն եւ թե ձեր լեզվով։
- ❒ Դուք կարող եք չեղյալ համարեք գաղթականական խորհրդատուի հետ կնքած պայմանագիրը եւ որեւէ ժամանակ ետ ստանաք վճարված գումարը։ Դուք իրավունք ունեք լրիվ գումարը ետ ստանալու, պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում։ Պայմանագրի չեղյալ համարելը պետք է գրավոր ձեւով լինի։
- ❒ Ունեցեք ամսագրված ստացագիր որտեղ նշվել է թե ինչի համար եւ ինչքան եք վճարել։ Վստահ եղեք որ խորհրդատուն կամ փաստաբանը ստորագրի ստացագիրը։
- ❒ Պահեք պայմանագրի, ստացագրի եւ ձեր կողմից լրացված ձեւերի կրկնօրինակները։ Մանրամասն նշումներ կատարեք եւ պահեք ձեր տոմարների համար։
- ❒ Միայն փաստաթղթերի կրկնօրինակները տվեք գաթականական խորհրդատուին կամ փաստաբանին։ Բնագիրը պահեք ձեզ մոտ ապահով տեղում։
- ❒ Երբեք մի ստորագրեք գաղթականական փաստաթուղթ որը դուք չեք հասկանում։ Դուք կարող եք հանցանք գործած լինել եթե ստորագրեք գաղթականական կամ այլ պաշտոնական փաստաթղթեր որոնք սխալ հայտարարություններ են պարունակում։ Խնդրեք որեւէ մեկին որպեսզի թարգմանի փաստաթղթերը ձեզ համար եթե դուք Անգլերեն չգիտեք կարդալ։
- ❒ Գաղթականական խորհրդատուն կամ փաստաբանը չպետք է INS ներկայացնի որեւէ փատաթուղթ եթե դրանք ձեզ համար անըմբռնելի են կամ թե ձեզ հստակ չէ թէ ինչի համար եք դուք ներկայացնում տվյալփաստաթղթերը։

Գաղթականական Ծառայություններ

❖

Պաշտպանելով Ձեր Սպառողի Իրավունքները

❖

Գաղթականի Օգնության Գրասենյակ

BILL LOCKYER
Ընդհանուր Դատախազ
Կալիֆորնիա Նահանգ

2001

Protecting Your Consumer Rights - Armenian

Եթե դուք ձեր գաղթականական վիճակի մասին օգնության կարիք ունեք, ուշադիր եղեք թե ում տեսնեք։ Միայն նահանգի կամ Ֆեդերալ ատյանի կողմից արտոնագրված փաստաբաններն են որ կարող են տալ օրինական խորհուրդ եւ ներկայացնել ձեզ գաղթականական ատյանում։ Ճանաչված ներկայացուցիչները կարող են ձեզ ներկայացնել գաղթականական ատյանում։ Կալիֆորնիայում, նոտարները, փաստաբանի օգնականները, վարկատու ներկայացուցիչները եւ գաղթականական խորհրդատուները միշտ չէ որ փաստաբաններ են։

Օրենքի դեմ է որ գաղթականական խորհրդատուն օրենքի վերաբերյալ ձեզ խորհուրդ տա։ Գաղթականական խորհրդատուն միայն կարող է օրենքի չվերաբերող հարցերով օգնել, օրինակ՝ թարգմանել ձեր պատասխանները INS-ի ձեւերի մեջ առաջադրված հարցերի, հավելյալ փաստաթղթերի կրկնօրինակներ պատրաստել, եւ ձեր խնդրանքով, ձեւերը INS-ին հանձնել։ Միայն փաստաբանն է որ կարող է օրենքի մասին ձեզ խորհուրդ տալ, օրինակ՝ ձեզ խորհուրդ տա թե ինչ INS-ի ձեւեր հարկ է լրացնել։

Զգուշացեք խաբեբաներից որոնք կարող են պատճառ դառնալ որ դուք կորցնեք հազարավոր դոլարներ եւ վնաս հասցնեք ձեր գաղթականական գործերին։ Որոշեք թե ինչպիսի օգնության կարիքը ունեք ու համեմատեք տարբեր փաստաբանների եւ գաղթականական խորհրդատուների արժեքներն ու ծառայությունները։ Եթե դուք փաստաբանի կարիք ունեք ստուգեք State Bar of California-ի հետ կամ տեղական իրավաբանական միությունների հետ։ Վերջավորությանը, գաղթականական խորհրդատուն կարող է ձեզ արժենա այնքան՝ ինչքան փաստաբանը։

Մի քանի ընդհանրացված խաբեություններ.

- Սուտ խոստումներ շռայլել ու ձեւացնել թե ինքը հատուկ ազդեցություն ունի INS-ում։ Ոչ ոք կարող է ձեզ գործի իրավունք կամ այլ գաղթականական իրավունքներ երաշխավորել։
- Գաղթականական խորհրդատու կամ փաստաբան ձեւանալ երբ նա որակավորված չէ լինելու։
- Սպառողից դրամ է վերցնում եւ չի մատուցում որեւէ ծառայություն։
- Ստիպում է սպառողին սուտ դիմում լրացնել կամ ստել INS-ի աշխատողին։
- Պահում է սպառողի փաստաթղթերի բնագիրը եւ դրամ է պահանջում փաստաթղթերը ետ վերադարձնելու համար։
- Ներկայացնում է անհիմն դիմումնագիր։ Օրինակի համար, լրացնում է քաղաքական ապաստանության դիմումնագիր սպառողի կողմից, որը իրավասու չէ ապաստանություն շնորհվելու։
- Սպառողից բոլոր ծառայությունների համար կանխիկ գանձում է ամբողջ գումարը եւ հետո հավելյալ գումար է պահանջում որպեսզի շարունակի սպառողի գործը։

Հարցեր Ունենալու եւ Բողոք Ներկայացնելու Համար.

➢ California Department of Justice
Office of Immigrant Assistance
(888) 587-0557
http://www.caag.state.ca.us

➢ State Bar of California
(800) 843-9053
http://www.calbar.org

➢ Ձեր Տեղամասի Փաստաբանը

Ստուգելու Համար Եթե Գաղթականական Խորհրդատուն Ունի $50,000 Երաշխիք.

➢ California Secretary of State
(916)653-4984
http://www.ss.ca.gov/cgi-bin/bond_search.cgi

Որակավորված Ներկայացուցիչների Ցանկը Ունենալու Համար.

➢ U.S.Department of Justice
http://www.usdoj.gov/eoir/statspub/raroster.htm